ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Թմրամիջոցների, հոգեներգործող նյութերի և բաղադրիչների ապօրինի շրջանառության դեմ պայքարում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» 2000 թվականի նոյեմբերի 30-ի Համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին

«Թմրամիջոցների, հոգեներգործող նյութերի և բաղադրիչների ապօրինի շրջանառության դեմ պայքարում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» 2000թ. նոյեմբերի 30-ի Համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) մասնակից պետությունների Կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

ձգտելով կատարելագործել թմրամիջոցների, հոգեներգործող նյութերի, դրանց համարժեքների, ածանցյալների, ինչպես նաև բաղադրիչների և հոգեակտիվ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարում համագործակցությունը,

ղեկավարվելով Համաձայնագրի 18-րդ հոդվածով,

համաձայնեցին ներքոնշյալի մասին.

Հոդված 1

Համաձայնագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Լրացնել 1.1 հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 1.1

Օգտագործվող հասկացություններ

Սույն Համաձայնագրի նպատակների համար օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստները.

թմրանյութերի և բաղադրիչների պետական ցանկ (այսուհետ՝ պետական ցանկ) - համապատասխան միջազգային կոնվենցիաների և ԱՊՀ մասնակից պետությունների օրենսդրության հիման վրա սահմանված ցուցակներում միավորված՝ վերահսկողության ենթակա թմրանյութերի և բաղադրիչների ցանկ,

թմրամիջոցներ - սինթետիկ կամ բուսական (բնական) ծագման նյութեր, պատրաստուկներ, բույսեր՝ որպես այդպիսին դասակարգված համապատասխան միջազգային կոնվենցիաներում և/կամ ներառված ազգային ցանկերում, որոնց

շրջանառությունն արգելված կամ սահմանափակված է և ենթակա է վերահսկման ԱՊՀ մասնակից պետությունների տարածքներում,

հոգեներգործող նյութեր - սինթետիկ կամ բուսական (բնական) ծագման նյութեր, պատրաստուկներ, ինչպես նաև ցանկացած բնական նյութեր՝ որպես այդպիսին դասակարգված միջազգային կոնվենցիաներում և/կամ պետական ցանկերում ներառված, որոնց շրջանառությունն արգելված կամ սահմանափակված է և ենթակա է վերահսկման ԱՊՀ մասնակից պետությունների տարածքներում,

պատրաստուկներ - ցանկացած ֆիզիկական վիճակի նյութերի խառնուրդ, որը պարունակում է պետական ցանկերում ներառված մեկ կամ մի քանի թմրամիջոց և/կամ հոգեներգործուն նյութ,

թմրանյութերի բաղադրիչներ (այսուհետ՝ բաղադրիչներ) - պետական ցանկում ներառված թմրանյութերի արտադրման, պատրաստման և վերամշակման համար օգտագործվող նյութեր, որոնց շրջանառությունն արգելված կամ սահմանափակված է և ենթակա է վերահսկման ԱՊՀ մասնակից պետությունների տարածքներում,

թմրանյութերի համարժեքներ (այսուհետ՝ համարժեք) - շրջանառության համար արգելված նյութեր, որոնք ներառված չեն պետական ցանկերում և դասակարգված չեն համապատասխան միջազգային կոնվենցիաներում որպես թմրամիջոցներ կամ հոգեներգործող նյութեր և բաղադրիչներ, որոնց քիմիական կառուցվածքը և հատկությունները նման են թմրանյութերի քիմիական կառուցվածքին և թմրամիջոցների հատկություններին, որոնք վերարտադրում են դրանց հոգենեակտիվ ազդեցությունը,

թմրանյութերի ածանցյալներ (այսուհետ՝ ածանցյալ) - սինթետիկ կամ բուսական ծագման նյութեր, որոնք, առանձին տողերով, չեն ներառվել պետական ցանկերում, որոնց քիմիական կառուցվածքը, համապատասխան թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի քիմիական կառուցվածքի, առաջացել է մեկ կամ մի քանի ջրածնի ատոմները, հալոգենները և/կամ հիդրոքսիդ խմբերը այլ միարժեք և/կամ երկարժեք ատոմներով կամ փոխարինողներով (բացառությամբ հիդրոքսիդ և կարբոքսիդ խմբերի) փոխելով (պաշտոնական փոխարինում), որոնց ջրածնի ատոմների ընդհանուր քանակը չպետք է գերազանցի համապատասխան թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի սկզբնական քիմիական կառուցվածքի ատոմների քանակը:

Այն դեպքում, եթե նույն նյութը կարող է համարվել մի քանի թմրամիջոցների կամ հոգեներգործող նյութերի ածանցյալ, այն ճանաչվում է է թմրամիջոցի կամ հոգեներգործող նյութերի ածանցյալ, որի քիմիական կառուցվածք փոխելը համար պահանջվում է նվազագույն քանակությամբ փոխարինողների և/կամ ատոմների ներառում,

նոր պոտենցիալ վտանգավոր հոգեակտիվ նյութեր (այսուհետ՝ հոգեակտիվ նյութեր) - մարդու կյանքի և առողջության համար վտանգավոր՝ թմրանյութային կամ թունավոր հարբածություն առաջացնող՝ սինթետիկ կամ բնական ծագման նյութեր, որոնց նկատմամբ սահմանված չեն սանիտարահամաճարակաբանական պահանջներ կամ դրանց շրջանառությունը վերահսկելու միջոցներ,

թմրանյութերի և բաղադրիչների ապօրինի շրջանառություն - ԱՊՀ մասնակից պետությունների օրենսդրության խախտմամբ թմրանյութերի և բաղադրիչների շրջանառություն,

թմրամոլություն - թմրանյութային կախվածությամբ պայմանավորված հիվանդություն,

թմրամոլության կանխարգելում - թմրամոլության տարածման պատճառների և պայմանների հայտնաբերմանը, կանխարգելմանը և վերացմանն ուղղված՝ քաղաքական, իրավական, սոցիալական, մշակութային, բժշկական, տնտեսական, մանկավարժական և այլ բնույթի միջոցառումների ամբողջություն»:

2. 4-րդ հոդվածում.

2.1 Երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«նշված ոլորտում հանցավորության իրավիճակի մասին օպերատիվ, վիճակագրական, գիտա-մեթոդական և այլ տեղեկատվության, թմրանյութերի և բաղադրիչների, համարժեքների, ածանցյալների, հոգեակտիվ նյութերի ապօրինի շրջանառությանն առընչություն ունեցող անդրազգային հանցավոր խմբերի և դրանց առաջնորդների մասին տվյալների միասնական բանկը լրացնելու համար տեղեկատվության փոխանակում, այդ թվում՝ ներառելով տվյալներ.

ա) պետական ցանկերի մասին,

բ) համաձայն պետական օրենսդրության՝ շրջանառության համար արգելված հոգեակտիվ նյութերի, համարժեքների և ածանցյալների գրանցամատյանների (ցանկերի, ցուցակների) մասին,

գ) անվանումների, քիմիական կառուցվածքի և հայտնաբերված հոգեակտիվ նյութերի, համարժեքների և ածանցյալների մասին,

դ) ԱՊՀ մեկ կամ մի քանի մասնակից պետությունների տարածքներում թմրանյութերի եւ բաղադրիչների ապօրինի շրջանառության հետ կապված նախապատրաստվող կամ կատարված հանցագործությունների մասին,

ե) Կողմերի կողմից գաղտնիության ապահովման դեպքում կամ միջազգային պայմանագրի հիման վրա, պետական օրենսդրության համաձայն, առանձնահատուկ մեծ քանակությամբ թմրանյութերի շրջանառության համար ձերբակալված անձանց մասին,

զ) ԱՊՀ մասնակից պետությունների պետական սահմաններով, այդ թվում՝ երրորդ պետություններով տարանցմամբ թմրանյութերի ապօրինի տեղափոխման և թաքցնելու կիրառվող տարբերակների մասին,
է) թմրանյութերի և բաղադրիչների նոր տեսակների, համարժեքների, ածանցյալների, հոգեակտիվ նյութերի, դրանց պատրաստման մեթոդների և տեխնոլոգիաների, դրանցում օգտագործվող նյութերի մասին,
ը) թմրանյութերի տեղափոխման համար անդրսահմանային ուղիներ օգտագործող կազմակերպված հանցավոր խմբերի և անձանց մասին,
թ) թմրանյութերի ապօրինի արտադրման համար դրանց հնարավոր օգտագործումը հայտնաբերելու նպատակով բաղադրիչների շրջանառության մասին,
ժ) թմրանյութերի հայտնաբերման ժամանակակից մեթոդների և միջոցների մասին,
ժա) թմրանյութերի և բաղադրիչների ապօրինի շրջանառության դեմ պայքարի, թմրամոլությանը հակազդելու հետ կապված հարցերի օրենսդրական կարգավորման փորձի մասին,
ժբ) թմրամոլության կանխարգելման հարցերով պետական և ոչ պետական մարմինների (կազմակերպությունների) հետ համագործակցության մասին:»:

2.2 4-րդ պարբերությունից հետո ավելացնել պարբերություններ՝ հետևյալ բովանդակությամբ.

«թմրանյութերի և բաղադրիչների ապօրինի շրջանառության հետ կապված անդրազգային բնույթի հանցագործությունների բացահայտման և հետաքննության նպատակով օպերատիվ-հետաքննչական համատեղ խմբերի ստեղծում,

Համալիր համաձայնեցված և/կամ համատեղ միջգերատեսչական, կանխարգելիչ և օպերատիվ-հետախուզական միջոցառումների, հատուկ օպերացիաների անցկացում՝

ա) ԱՊՀ մասնակից պետությունների սահմաններով թմրանյութերի փոխադրման ուղիների հայտնաբերման, խափանման, ինչպես նաև դրանց ապօրինի շրջանառության հետ կապ ունեցող անձանց հայտնաբերման նպատակով,

բ) թմրանյութերի և բաղադրիչների ապօրինի շրջանառությունից ստացված եկամուտների օրինականացման (լվացման) համար բանկային, կոմերցիոն և այլ կառուցվածքների օգտագործումը խափանելու նպատակով,

գ) թմրանյութերի արտադրման ընդհատակյա (ապօրինի) լաբորատորիաների ոչնչացման նպատակով,

դ) թմրանյութ պարունակող ապօրինի մշակաբույսերի, ինչպես նաև թմրանյութ պարունակող վայրի բույսերի պոպուլյացիաների ոչնչացում,

ե) թմրանյութերի տարածման համար համացանցի հնարավորությունների օգտագործումը խափանելու նպատակով:»:

2.3 5-11-րդ պարբերություններն ընդունել համապատասխանաբար որպես 7-13-րդ պարբերություններ:

Հոդված 2

Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն ստորագրած Կողմերի՝ դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ ծանուցումն ավանդապահի_ստանալու օրվանից երեսուն օր անց:

Ներպետական ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում համապատասխան փաստաթղթերն ավանդապահի ստանալուց հետո՝ երեսուներորդ օրը:

Հոդված 3

Սույն Արձանագրության գործողությունը դադարեցվում է Համաձայնագրի գործողության դադարեցման հետ միաժամանակ:

Հոդված 4

Սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելուց հետո բաց է ցանկացած անդամ պետության միանալու համար՝ միացման մասին փաստաթուղթը ավանդապահին փոխանցելու միջոցով:

Միացող պետության համար սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում միանալու մասին փաստաթուղթն ավանդապահի ստանալուց հետո՝ երեսուներորդ օրը:

Կատարված է Մոսկվա քաղաքում 2019 թ. հոկտեմբերի 25-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր կոմիտեում, որն էլ կուղարկի դրա հաստատված պատճենը՝ սույն Արձանագրությունը ստորագրած յուրաքանչյուր պետությանը :

Ադրբեջանի Հանրապետության Կառավարության կողմից՝	**Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից՝**
	[ստորագրություն]

Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից՝

[ստորագրություն]

Տաջիկստանի Հանրապետության Կառավարության կողմից՝

[ստորագրություն]

Բելառուսի Հանրապետության Կառավարության կողմից՝

[ստորագրություն]

Թուրքմենստանի Կառավարության կողմից՝

Ղազախստանի Հանրապետության Կառավարության կողմից՝

[ստորագրություն]

Ուզբեկստանի Հանրապետության Կառավարության կողմից՝

[ստորագրություն]

Ղրղզստանի Հանրապետության Կառավարության կողմից՝

[ստորագրություն]

Ուկրաինայի Կառավարության կողմից՝

Մոլդովայի Հանրապետության Կառավարության կողմից՝

[ստորագրություն]

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2019 թվականի հոկտեմբերի 25-ին ստորագրված «Թմրամիջոցների, հոգեներգործող նյութերի և բաղադրիչների ապօրինի շրջանառության դեմ պայքարում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» 2000 թվականի նոյեմբերի 30-ի Համաձայնագրում» փոփոխություններ կատարելու մասին արձանագրության հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն